ՌՈՒԶԱՆՆԱ ԺԱՄԿՈՅՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության ամբիոնի դասախոս

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՓՈԽՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Ներկայիս տնտեսական, քաղաքական արագընթաց փոփոխությունների հետևանքով հասարակությունը մշտական դինամիկ զարգացումների կիզակետում է, որոնք առաջադրում են նորանոր խնդիրներ: Փոխակերպվող հասարակության առաջնային խնդիրներից է հանդիսանում հասարակության անդամների ադապտացիան նոր սոցիալ-հոգեբանական պայմաններին, միջանձնային հարաբերությունների նոր մոդելներին, նոր սոցիալ-մշակութային կյանքին:

Այս խնդիրների հաղթահարման և հարմարման համար անձնավորության մոտ անհատական զարգացման ընթացքում սկսում են ձևավորվել հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ, անձնային կառույցներ, դեռահասություն

Հոգեբանական պաշտպանությունը հանդես է գալիս որպես հատուկ կայունացնող համակարգ, որն իր գործունեությունն իրականացնում է անձնավորության անհատական զարգացման ընթացքում ձևավորվող հատուկ մեխանիզմների օգնությամբ: Այս մեխանիզմները անձնավորության գիտակցությունը, անձի Ես կերպարը, նրա պատկերացումներն արտաքին աշխարհի վերաբերյալ պաշտպանում են տարբեր բացասական հուզական ապրումներից և ընկալումներից, նպաստում են հոգեբանական հոմեոստազի պահպանությանը, կայունությանը, ներանձնային կոնֆլիկտների լուծմանը և ընթանում են անգիտակցական և ենթագիտակցական մակարդակներում: Ընդ որում՝ անձնավորության զարգացման սկզբական շրջանում կիրառվում են բացառապես տարրական պաշտպանական մեխանիզմներ, իսկ զարգացմանը զուգընթաց անձնավորությունը ընդունակ է լինում կիրառել նաև ավելի հասուն պաշտպանական մեխանիզմներ:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, պաշտպանելով անձնավորության Եսը, հնարավորություն են տալիս նրան ձևավորվել և զարգանալ, իսկ արդեն զարգացած Եսի պաշտպանության համար նախկին պաշտպանական միջոցների անբավարար լինելու և անձնավորության հոգեկան զարգացման արդյունքում անհրաժեշտ է լինում կիրառել նոր, ավելի արդյունավետ պաշտպանական մեխանիզմներ:

Անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հիմնախնդիրը չափազանց ընդգրկուն է: Այդ մեխանիզմների բացահայտումն ու նկարագրությունը հոգեվերլուծության և, ընդհանրապես, անձի հոգեբանության լուրջ նվաճումներից մեկն է: Դրանց վերլուծությունը զգալիորեն խորացնում է մարդու հոգեկան կյանքի և մարդկային հարաբերությունների մոտիվացիայի իմացությունը:

Հոգեբանական պաշտպանությունը օնտոգենետիկ զարգացման ընթացքում ձևավորված համակարգ է, որը անձնավորության գիտակցությունը, անձի Ես կերպարը, նրա պատկերացումներն ար-

տաքին աշխարհի վերաբերյալ պաշտ-պանում է տարբեր բացասական հուզա-կան ապրումներից և ընկալումներից, դրանով իսկ՝ նպաստում հոգեբանական հոմեոստազի պահպանությանը, կայու-նությանը և ներանձնային կոնֆլիկտնե-րի լուծմանը:

Հոգեբանական պաշտպանության խնդիրը շատ է քննարկված (Զ. Ֆրեյդ [11,12,13,16], Ա Ֆրեյդ [8,9,14,15], Զ. Բլյում [2], Ռ.Պլուտչիկ [17]): Այնուամենայնիվ, դեռ բավականաչափ ուսումնասիրված չեն հոգեբանական պաշտպանական մեխանիզմների գենեզիսը, զարգացման և դրսևորման օրինաչափությունները, տարբեր են դրանց քանակի և կատա-րած դերի վերաբերյալ կարծիքները:

«Պաշտպանություն» հասկացությու-նը Զ. Ֆրեյդը օգտագործել է 1894թ իր «Պաշտպանական նեյրոպսիխոզներ» աշխատության մեջ [16,էջ 67-81]: Այս-տեղ Զ. Ֆրեյդը պաշտպանական մե-խանիզմները դիտում է, որպես բնածին գործող մեխանիզների մի համակարգ, որը սկսում է գործել լարված իրավի-ճակներում և հիմնական գործառույթն է գիտակցության և անգիտակցականի միջև առաջացած կոնֆլիկտի լուծումը:

Պաշտպանությունն, ըստ Ֆրեյդի, «Ես»-ի պաշտպանությանն ուղղված անգիտակցական հոգեկան գործընթաց-ների բնածին ամբողջական համակարգ:

Զ.Ֆրեյդի պատկերացումները հոգե-բանական պաշտպանության վերաբե-րյալ ձևավորվել են իր հոգեբանական պրակտիկայի ընթացքում, հատկապես նևրոզներով հիվանդների հետ աշխա-տանքի ընթացքում: Զ. Ֆրեյդը գտնում էր, որ նևրոզների առաջացման հիմնա-կան պատճառներից են անձի ներքին կոնֆլիկտները, որոնք ձևավորվում են, երբ անձի ներքին մղումների, ցանկու-թյունների բավարարմանը խոչընդոտում են արտաքին իրադրությունները, կյան-քի իրադրությունները, հասարակության կողմից ընդունված նորմերն ու կանոն-ները, անձի Գեր Ես-ը: Ներքին կոնֆ-լիկտներն ուղեկցվում են լարվածու-թյան և անհարմարության զգացմամբ, որոնց հաղթահարման և թուլացման համար սկսում են գործել հոգեբանա-կան պաշտպանական մեխանիզմները:

Հոգեբանական պաշտպանությունը Զ. Ֆրեյդը կապում է անձնավորության կառույցների՝ Այն-ի, Ես-ի, Գեր Ես-ի զարգացման հետ: Ես-ը Այն-ից եկող էներգիան ուղղում է հասարակության կողմից ընդունված վարքի դրսևորմա-նը, որը խրախուսվում է Գեր Ես-ի կող-մից:

Հոգեբանական պաշտպանության հիմնախնդիրը այժմ լայնորեն ուսում-նասիրվում է հոգեբանության տարբեր բնագավառների կողմից:

Հոգեբանական պաշտպանության վերաբերյալ գիտելիքները լրացվե-ցին Զ. Ֆրեյդի դստեր՝ Ա. Ֆրեյդի կող-մից: Նա կարևորում էր հոգեբանական պաշտպանության դերը անձնավորու-թյան հոգեկանի նորմալ ձևավորման և զարգացման գործում:

Ա. Ֆրեյդը տվել է պաշտպանական մեխանիզմների առաջին ծավալուն սահմանումը. «Պաշտպանական մեխա-նիզմները «Ես»-ի գործունեությունն են, որը սկսվում է, երբ «Ես»-ը ենթակա է գրգռման կամ դրան համապատասխան աֆեկտների չափազանց մեծ ակտիվու-թյան, ինչը վտանգ է ներկայացնում նրա համար: Պաշտպանական մեխանիզմնե-րը գործում են ավտոմատ՝ չհամաձայ-նեցվելով գիտակցության հետ» [14,15,էջ 172-173]:

Մեր հետազոտության շրջանակնե-րում ուսումնասիրել ենք դեռահասնե-րի պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների փոխպայմա-նավորվածության առանձնահատկու-թյունները:

Հետազոտությանը մասնակցել են 47 դեռահասներ: Ընտրակազի ընտրությու-նը պայմանավորված է հետազոտվող-ների տարիքային առանձնահատկու-թյամբ և դեռահասության ճգնաժամով,

քանի որ ենթադրվում է, որ պաշտպանական մեխանիզմներն ավելի շատ են կիրառվում ճգնաժամը հաղթահարելու համար:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրության համար կիրառել ենք Ռ.Պլուտչիկի, Գ.Կելլերմանի և Հ.Ռ Կոնտեի «Կյանքի ոճի ինդեքս»«Life Style Index, LSI) հարցարանը, որը հնարավորություն է տալիս հետազոտել դեռահասների առանձին հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կիրառման մակարդակը [3]:

Անձնային կառույցների ուսումնասիրության համար հիմք ենք համարել Բ.Գ. Անանևի Անձի կառույցի հայեցակարգը [1,էջ 7-94]: Ըստ Բ.Գ. Անանևի՝ անձի կառուցվածքը բաղկացած է միմյանց հետ փախկապակցված երեք կառույցներից՝ ինտելեկտ, կամք, հույզեր:



Գծապատկեր 1. Անձի կառույցը ըստ Բ.Գ. Անանևի [1]

Այս երեք բաղադրիչները միմյանց հետ սերտորեն են կապված, կարող են միաժամանակ փոխազդեցության մեջ մտնել, և անձի զարգացմանը զուգընթաց փոխվում է նաև նրանց փոխազդեցության բնույթը: Այսպես, կամային ջանքերը նպաստում են հույզերի հաղթահարմանը, որը և թույլ է տալիս հոգեկան էներգիան օգտագործել ինտելեկտուալ գործընթացների համար: Իսկ ինտելեկտուալ գործընթացների զարգացումը նպաստում է անձի կողմից իր նպատակների հստակ գիտակցմանն ու դրանց իրականացման համար կամային ջանքեր գործադրելուն:

Մեր հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել, թե դեռահասության տարիքում որ պաշտպանական մեխանիզմներն են մասնակցում առանձին անձնային կառույցների պաշտանությանը և որ անձնային կառույցների զարգացումն է նպաստում առանձին պաշտպանական մեխանիզմների կիրառմանը:

Դեռահասների կամային որակների գնահատման նպատակով օգտագործվել է Ն. Ն. Օբոզովայի «Կամքի ուժի ինքնագնահատում» թեստը [4,էջ 316-317]: Հետազոտվողների ինտելեկտը հետազոտելու նպատակով կիրառվել է Ջ.Ռավենի «Աստիճանաբար բարդացող աղյուսակներ» «Progressive Matrices» մեթոդիկան [18,էջ 60]: Հուզական ոլորտի ուսումնասիրության համար կիրառել ենք Վ. Մ. Ռուսալովի «Հուզականության ախտորոշում»մեթոդիկան [5,էջ 541-543]:

Կատարված հետազոտության արդյունքներն ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության համակարգչային SSPS ծրագրով: Համահարաբերակցության գործակիցը որոշվել է Չ. Է. Սպիրմենի առաջադրած բանաձևով [6]: Տվյալների ազատության աստիճանը և թույլատրելի սխալի հավանականությունը որոշվել է սխալի հավանականության Ρ Կ. Պիրսոնի աղյուսակի միջոցով [7]:

Հետազոտության տվյալների վերլու-

ծության արդյունքում P≤0,05 հավաստիությամբ դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել կամքի ուժի և կոմպենսացիա պաշտպանական մեխանիզմի միջև (երբ r=0.311): Կոմպենսացիան որպես պաշտպանական մեխանիզմ ձևավորվում է հենց դեռահասության տարիքում: Այն իրենից ներկայացնում է սեփական թույլ կողմերի թաքցնելը ուժեղ կողմերը ընդգծելու միջոցով կամ մեծ ջանքերի շնորհիվ թույլ կողմի ուժեղացում: Հետևաբար կոմպենսացիայի կիրառությունը ենթադրում է կամքի ուժի առկայություն, որպեսզի կարողանա նպատակաուղղված կերպով ձգտել հաջողության: Քանի որ կոմպենսացիան ավելի հասուն պաշտպանական մեխանիզմ է, այն գործում է գիտակցական դաշտում և միայն հաճախակի կիրառության դեպքում է, որ անցնում է ենթագիտակցական ոլորտ՝ որպես ավտոմատացված գործընթաց:

P≤0,05 հավաստիության դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել նաև կամքի ուժի և ինտելեկտուալիզացիա պաշտպանական մեխանիզմի միջև (երբ r=0.316): Նման կապը պայմանավորված է ինտելեկտի և կամքի փոխկապակցվածությամբ: Ինտելեկտուալիզացիան, լինելով ինտելեկտի կողմից կառավարվող պաշտպանական մեխանիզմ , կապված է կամքի հետ: Սթրեսորների ազդեցությունը հաղթահարելու համար անձնավորությունը պետք է կարողանա համարժեք գնահատել ստեղծված իրադրությունը, սպառնացող վտանգի էությունը և կարողանա համարժեք պատասխանել դրան: Այս գործընթացի իրականացումն անհնարին է առանց ինտելեկտուալ գործընթացների, որոնց իրականացման համար մեծ նշանակություն ունի անձնավորության կամքը: Եվ հակառակը, կամային ջանքերի իրականացման անբաժանելի մասն են կազմում ինտելեկտուալ գործընթացները, որոնք վերլուծության են ենթարկում դրդապատճառապահանջմունքային ոլորտը, նպատակները, նախատեսվող գործողություններն ու սպասվող արդյունքը: Միայն վերլուծության արդյունքների գնահատումն է որոշում անձնավորության կողմից կամային ջանքեր գործադրելը կամ չգործադրելը:

Այսպիսով, ինտելեկտուալիզացիայի և կամքի ուժի միջև արտահայտված կապը պայմանավորված է հենց ինտելեկտի և կամքի փոխկապվածությամբ:

Ինտելեկտուալիզացիայի ընթացքում անձնավորությունը կամային ջանքեր է գործադրում հույզերի զսպման նպատակով, որը և հնարավորություն է տալիս ինտելեկտին աշխատել և իրականացնել պաշտպանությունը:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել նաև դեռահասների կամքի ուժի և հակազդեցության ձևավորման միջև (P≤0,05 , r= 0.309): Մեր կարծիքով նման կապը պայմանավորված է նրանով, որ հակազդեցության ձևավորման համար անհրաժեշտ է նախ և առաջ հաղթահարել առկա իրական հույզը, այնուհետև կարողանալ դրսևորել այն հույզը, որը անհրաժեշտ է ստեղծված իրադրության մեջ: նման պայմաններում կամքը բավականին մեծ դեր է կատարում, քանի որ կամային գործընթացների շնորհիվ արգելակվում են առաջացած հույզերը, զսպվում են դրանք, և անձնավորությունը հնարավորություն է ունենում ձևավորել այն հակազդեցությունը, որը անհրաժեշտ է, կամ որը ստեղծված իրադրության պայմաններում իրենից ակնկալվում է:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել ինտելեկտի և ինտելեկտուալիզացիա պաշտպանական մեխանիզմի միջև (P≤0,01 , r= 0.389):

Ինտելեկտուալիզացիան բնորոշվում է որպես իրադարձությունները չափազանց ռացիոնալ եղանակով բացատրելու ճանապարհով իրականացվող անգիտակցական վերահսկողություն հույզերի և հակումների վրա: Ինքնագ-

նահատականին սպառնացող տհաճ ինֆորմացիան, անհաջողություններն ու վախերը ինտեռելեկտուալ գործընթացների միջոցով վերլուծվում են, բացատրվում և արդարացվում են, որը նպաստում է հուզական բովանդակության անջատման և տագնապի իջեցման:

Ստացված համահարաբերակցային կապը բացատրվում է ինտելեկտուալիզացիա պաշտպանական մեխանիզմի առանձնահատկությամբ, որը ենթադրում է ինտելեկտուալ գործընթացների ակտիվ աշխատանք: Ինտելեկտուլիզացիան նույնպես ձևավորվում է դեռահասության տարիքում և համարվում է հասուն պաշտպանական մեխանիզմ:

Դեռահաս հետազոտվողների պաշտպանական մեխանիզմների և հուզականության հետազոտության տվյալների համահարաբերակցային վերլուծության արդյունքում P≤0,05 հավաստիությանը մոտ կապ է բացահայտվել ընդհանուր հուզականության և կոմպենսացիա պաշտպանական մեխանիզմի միջև (P≤0,05 երբ r=0.297): Մեր կարծիքով նման կապի արտահայտվածությունը, պայմանավորված է տարիքային առանձնահատկություններով: Այս տարիքում դեռահասի առաջնային խնդիրներից է հասակակիցների միջավայր ներգրավվելը, նրանց կողմից ընդունված և սիրված լինելը: Ըստ Ադլերի՝ կոմպենսացիա պաշտպանական մեխանիզմը պայմանավորված է թերարժեքության բարդույթով, որը անձի մոտ ձևավորված է դեռևս մանկուց [13]: Իսկ դեռահասության տարիքում թերարժեքության բարդույթի պատճառ է հանդիսանում նաև փոփոխվող արտաքինը, այն ոլորտը, որտեղ դեռահասը անհաջողություն է ունենում: Սեփական անհաջողությունը հաղթահարելու և հասակակիցների մոտ լավը երևալու ցանկությունը ստիպում է կոմպենսացնել անհաջողությունները: Սովորաբար այս տարիքում ուսման մեջ հաջողություններ չունեցող դեռահասները կոմպենսացնում են այն սպորտի կամ հասարակության կողմից ընդունված և բարձր գնահատվող ոլորտում հաջողության հասնելով: Եվ հակառակը շատ դեռահասներ միջանձնային շփումներում անհաջողությունը կոմպենսացում են ուսման մեջ ունեցած հաջողությամբ: Այս ամենը ուղեկցվում է հուզականությամբ, քանի որ և՛ հաջողության հասնելու մեծ ցանկությունը, և՛ անհաջողությունները ուղեկցվում են հուզականությամբ: Հակառակ դեպքում դեռահասը անտարբեր կլիներ դրանց նկատմաբ և կոմպենսացիայի անհրաժեշտություն չէր լինի:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել ընդհանուր հուզականության և պրոյեկցիայի միջև (P≤0,05 , երբ r=0.301): Ի տարբերություն կոմպենսացիայի ՝ պրոյեկցիայի ընթացքում հույզերի արտաքին դրսևորումն ակնհայտ է: Պրոյեկցիայի ընթացքում հույզերի բուռն դրսևորումը ամենայն հավանականությամբ պայմանավորված է նրանով, որ սեփական թերությունների ընդգծվում են դիմացինի մոտ, և դրանց տրվող պատասխանները անկեղծ են լինում:

P≤0,05 հավաստիության դրական կապ է բացահայտվել ընդհանուր հուզականության և փոխարինման միջև(r= 0.316): Փոխարինման էությունն իսկ կայանում է ճնշված հույզի լիցքաթափմամբ այն օբյեկտի վրա, որը ավելի հասանելի և թույլ է: Հիմնականում փոխարինման հույզերն են զայրույթն ու թշնամանքը:

P≤0,05 հավաստիության դրական կապ է բացահայտվել ընդհանուր հուզականության և ինտելեկտուալիզացիայի միջև (r= 0.297): Քանի որ ընտրված մեթոդիկան մեզ հնարավորություն է տալիս նաև չափել ինտելեկտուալ հուզականության մակարդակը, ապա համահարաբերակցային կապի ուսումնասիրությամբ 0.05 հավաստիությամբ կապ է բացահայտվել ինտելեկտուալ

հուզականության և ինտելեկտուալիզացիայի միջև: Երկու դեպքում էլ աշխատում են ինտելեկտուալ գործընթացները: Մի դեպքում ինտելեկտը օգնում է պաշտպանվել, մյուս դեպքում՝ նպաստում է հույզերի դրսևորման կարգավորմանը:

P≤0,05 հավաստիության դրական կապ է բացահայտվել նաև ընդհանուր հուզականության և հակազդեցության ձևավորման միջև (r=0.307): Հակազդեցության ձևավորմանը մասնակցում է նախ և առաջ ազդակի կողմից առաջացրած այն հույզը, որը առաջացել է ի սկզբանե: Այնուհետև անհրաժեշտություն է առաջանում զսպել այն և ձևավորել նոր՝ տվյալ պարագայում հարմար հակազդեցություն:

Ինչպես ներկայացնում է Ռ. Պլուտչիկը՝ ցանկացած պաշտպանական մեխանիզմի հիմքում ընկած է որոշակի հույզ, որը կոնկրետ պաշտպանական մեխանիզմի ընտրության անհրաժեշտություն է առաջացնում: Քանի որ դեռահասության տարիքում հույզերն ավելի ակտիվ են, ուստի պաշտպանական մեխանիզմների կիրառությունն ավելի բարձր է:

Ստացված համահարաբերակցային կապը բացատրվում է ինտելեկտուալիզացիա պաշտպանական մեխանիզմի առանձնահատկությամբ, որը ենթադրում է ինտելեկտուալ գործընթացների ակտիվ աշխատանք: Ինտելեկտուալիզացիան նույնպես ձևավորվում է դեռահասության տարիքում: Ստացված տվյալներից կարող ենք եզրակացնել, որ դեռահասության տարիքում տարրական պաշտպանական մեխանիզմները (պրոյեկցիա, փոխարինում) կապված են դեռահասի հուզական ոլորտի հետ: Իսկ հասուն պաշտպանական մեխանիզմները (ինտելեկտուալիզացիա, կոմպենսացիա, հակազդեցության կազմավորում) կապված են անձնային կառույցներից կամքի և ինտելեկտի հետ: Նման կապերը պայմանավորված են դեռահասության տարիքի առանձնահատկություններով, երբ հուզական ոլորտը անկայուն է, և տագնապալի իրադրության պայմաններում հոմեոստազի պահպանման համար միանում են տարրական պաշտպանական մեխանիզմները: Դեռահասության տարիքում կամքը և ինտելեկտը սկսում են ակտիվ զարգանալ, որին զուգընթաց ձևավորվում են ավելի հասուն համարվող պաշտպանական մեխանիզմները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ананьев Б. Г. Психологическая структура личности и ее становление в процессе индивидуального развития человека, Психология личности: отечественная психология. М., 1999, С. 7-94.
2. Блюм Дж. Психоаналитические теории личности / Пер. с англ., вступ. ст. А.Б. Хавина. - М.: Академический проект; Екатеринбург: Деловая книга, 1999. - 222 с .
3. Вассерман Л.И., Ерышев О.Ф., Клубова Е.Б. - Психологическая диагностика индекса жизненного стиля. - Спб.: Издательство: СПбНИПНИ им. В.М.Бехтерева, 2005. - 50 с.
4. Ильин Е. П. Психология воли. 2-е изд.— СПб: Питер, 2009. — 368 с: ил. — (Серия «Мастера психологии»), С.316-317:
5. Ильин Е. П. Эмоции и чувства. — СПб: Питер, 2001. — 752 с: ил. — (Серия «Мастера психологии»), С. 541-543:
6. Лихачев Д.С. Заметки и наблюдение. Л., Советский писатель, 1989. - С. 72 -74, С. 72 -74.
7. Плохинский А.Н. Биометрия , М., 1970. - 368 с.
8. Фрейд А. Психология «Я» и защитные механизмы. - М.: Педагогика-Пресс, 1993. - 140 с.
9. Фрейд А. Теория и практика детского психоанализа. Соч.: в 2 т. — М.: Эксмо-Пресс, 1999.
10. Фрейд З. Психология масс и анализ человеческого «Я», изд. «Современные проблемы», Н. А. Столляр, М., 1926 г. 41с.
11. Фрейд З. Избранное. - М.: Внешторгиздат, 1990. - 448 с.
12. Фрейд З. Психология бессознательного. - М.: Просвещение, 1990. - 447 с.

13. Adler A. Individual Psychology // Theories of Personality/ Lindzey G., Hall C. — N.Y. Wiley, 1957. P. 114–156.
14. Freud A. Defense Mechanisms: Encyclopedia Britanika, v.7., London, P. 172–173.
15. Freud A. The Ego and the mechanisms of defense // The writings of Anna Freud, Vol.2, London, 1977. P. 63.
16. Freud S. The defence nearo-psychoses // The collected Papers: in 10 v. — N.Y.: Collier Books, 1963. — v.2. — P. 67–81.
17. Plutchik R., Kellermann H., Conte H.R. A structural theory of ego defences and emotions // Isard C.E. (ed.) Emotions in personality and psychopathology. - N.Y.: Plenum, 1979. - P.229-257.)
18. Raven G. Progressive Matrices. Psychodiagnostica, narodny rodnik. Bratislava.- P.60.

THE INTERRELATION OF PERSON'S PSYCHOLOGICAL PROTECTIVE MECHANISMS AND PERSONAL STRUCTURES IN ADOLESCENCE

RUZANNA ZHAMKOTSYAN

Armenian State Pedagogical university after Khachatur Abovyan
Lecturer at the Chair of Psychology

The implementation of psychological defense mechanisms depends on the level of development of individual personality.

An important factor in the formation and development of mature defense mechanisms in adolescence is the development of adolescent intelligence and will.

ВЗАИМОДЕЙСТВИЕ ПСИХОЛОГИЧЕСКИХ ЗАЩИТНЫХ МЕХАНИЗМОВ ЧЕЛОВЕКА И ЛИЧНОСТНЫХ СТРУКТУР В ПОДРОСТКОВОМ ВОЗРАСТЕ

РУЗАННА ЖАМКОЦЯН

Армянский государственный педагогический
университет имени Хачатура Абовяна,
преподаватель кафедры психологии

Использование психологических защитных механизмов обусловлено уровнем развития личностных структур человека. В подростковом возрасте важным фактором формирования и развития защитных механизмов является развитие интеллекта и воли.